ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

17 մարտի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

39
(2705)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՉԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը 2017 թվականին բերման է ենթարկվել ոստիկանություն՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված ենթադրյալ հանցանք կատարելու կասկածանքով: Ավելին՝ անգամ քրեական գործ է հարուցված եղել, որը հետագայում կարճվել է: Իսկ ինչի՞ մասին է խոսքը. 2017 թվականի նոյեմբերի 28-ին Արթուր Հովհաննիսյանը իր Nissan March մակնիշի ավտոմեքենայով, եւ նրա ուղեւոր, Երեւան քաղաքի Արշակունյաց պողոտայի բնակիչ Գեւորգ Սավթալյանը բերման են ենթարկվել ոստիկանություն, իսկ նրանց մոտ, ըստ Գ. Շամշյանի տեղեկությունների, խուզարկությամբ հայտնաբերվել է 0.24 գրամ կշռով դեղնականաչավուն զանգված: Եվ, ահա, «Ժողովուրդ» օրաթերթը փետրվարի 14-ին դիմել էր ՀՀ ներքին գործերի նախարարության լրատվության վարչություն եւ հարց ուղղել, թե վերոնշյալ գործը ինչ հանգուցալուծում է ստացել, եւ արդյոք մեղադրանք առաջադրված է եղել Արթուր Հովհաննիսյանին, թե ոչ: Փետրվարի 20-ին Ներքին գործերի նախարարությունից ստացել ենք պատասխան, որում ասվում է. «28.11.2017թ.-ին Ա. Հ.-ին եւ Գ. Ս.-ն ապօրինի թմրամիջոց պահելու եւ օգտագործելու կասկածանքով բերման են ենթարկվել ՀՀ ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին: 05.12.2017թ. ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով (Իրացնելու նպատակով թմրամիջոցներ, հոգեմետ նյութեր ապօրինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը, առաքելը կամ դրանք ապօրինի իրացնելը պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով): հարուցվել է քրեական գործ, եւ նախապատրաստված նյութերն ուղարկվել են ՀՀ ՔԿ Երեւան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժին»: Այս նույն հարցով դիմեցինք նաեւ Քննչական կոմիտե, որից էլ ստացել ենք հետեւյալ պատասխանը. «Քրեական գործով որեւէ անձ քրեական պատասխանատվության չի ենթարկվել, իսկ իրականացված բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ քննության արդյունքում 2018 թվականի հունվարի 31-ին որոշում է կայացվել ՀՀ քրեական դատավարության նախկին օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ կետի՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով քրեական գործով վարույթը կարճելու մասին»: Գերատեսչությունների պատասխաններից անհայտ է մնում, թե ինչու է որոշվել գործը կարճել, սակայն փաստ է մեկ բան, որ նա բերման է ենթարկվել թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված ենթադրյալ հանցանք կատարելու կասկածանքով (իրացում, վաճառք, օգտագործում): «Ժողովուրդ» օրաթերթը եւս մեկ հարցում է ուղարկել՝ փորձելով հասկանալ, թե ինչն է դարձել ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանի՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության գործը կարճելու որոշման հիմքը: Շարունակելի...

ՔՊ-ականները որոշել են ամեն երեքշաբթի վարչության նիստ անել: Նիստերին մասնակցելու է նաեւ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Վարչության անդամներին նախապես ասվել է, որ այդ օրերին՝ երեկոյան ժամերին, հետաձգեն բոլոր իրենց գործերը, որպեսզի առանց բացառության բոլորը ներկա լինեն նիստերին: ՔՊ-ականները նման որոշում են կայացրել՝ Հայաստանի ու Արցախի շուրջ ստեղծված ծանր իրավիճակը հաշվի առնելով: Բանն այն է, որ ՔՊ-ում էլ շատ լավ գիտակցում են պահի լրջությունը, հասկանում են, որ Հայաստանն ու Արցախը փակուղում են, «մանեւրելու» տեղ այլեւս չունենք: Իր վերջին ասուլիսի ժամանակ էլ Փաշինյանը ցթաքցրեց, որ բանակցությունները փակուղի են մտել, Ադրբեջանը հրաժարվում է մինչ այս ստանձնած իր պարտավորություններից, ավելին՝ գնալով մեծացնում է իր պահանջները, տարածքային նկրտումները ոչ միայն Արցախի, այլեւ արդեն Հայաստանի տարածքի նկատմամբ: Խոսքը, ամենայն հավանականությամբ, հենց Սյունիքով միջանցքի մասին է: ՔՊ-ականները պարբերաբար ակնարկում են, որ հիմա բանակցային դաշտում ողջ ջանքերը ուղղված են Սյունիքը պահելուն, իսկ Արցախի հարցը թողել են բախտի քմահաճույքին, կամ ինչպես իրենք են ասում, «Արցախի ժողովուրդը եւ ղեկավարությունը իրենք հենց պետք է որոշեն իրենց ճակատագիրը»: Բացի սա, լարված է նաեւ Հայաստանի ներքաղաքական կյանքը. պարբերաբար ՔՊ-ականների կոռուպցիոն «հերոսությունների» մասին նոր տեղեկություններ են ջրի երես դուրս գալիս, ինչի արդյունքում ՔՊ-ն հայտնվում է մամուլի ու հասարակության քննադատության կիզակետում: Այս ամենը հաշվի առնելով՝ ՔՊ-ականները որոշել են ամեն շաբաթ հանդիպել, որպեսզի վարչապետից տեղեկանան արտաքին զարգացումների մասին, ինչպես նաեւ քննարկեն իրենք հետագա անելիքները:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ իրավապահ համակարգն առողջապահության նախկին նախարար, ՔՊ խմբակցության պատգամավոր Արսեն Թորոսյանի գործունեության մասով շրջանակն ընդլայնում է: Գործը հասնում է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» հիվանդանոցին: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ նախաքննական մարմինը հարցաքննության է հրավիրել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ի տնօրեն Արման Հովակիմյանին եւ երկու անգամ բավականին երկար պահել նրան նախաքննական մարմնում: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ հարցաքննվել են նաեւ բժշկական կենտրոնի աշխատակիցներ, ու չի բացառվում, որ առաջիկայում «Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ից ձերբակալություններ լինեն: Նշենք, որ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ն պետական եզակի բժշկական կենտրոններից է, որը 2020-ի ապրիլից գործել է որպես բացառապես քովիդ-կենտրոն:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ բանակային կորպուսի նախկին հրամանատար Արտակ Բուդաղյանը նշանակվել է ՊՆ հատուկ հանձնարարությունների գծով սպա: Նա կլինի բոլոր զորամասերին համապատասխան հանձնարարականներ տվողը: Հիշեցնենք, որ փետրվարի 1-ին, ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի հրամանագրով, Արտակ Բուդաղյանն ազատվել էր բանակային կորպուսի հրամանատարի պաշտոնից: ArmLur.am-ը փետրվարի 2-ին գրել էր, որ Արտակ Բուդաղյանին Պաշտպանության նախարարությունում լուրջ պաշտոն են առաջարկել, եւ առաջիկայում նրա նշանակումը կլինի, եւ, ահա, նրա նշանակումը եղել է:

ՓԱԿՈՒՂԻ

ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՉԷ

Նիկոլ Փաշինյանն իր վերջին ասուլիսի ժամանակ մի շարք ոչ հուսադրող հայտարարություններ արեց Արցախի մասին՝ ակնարկելով, որ իրավիճակն իսկապես ծայրահեղ է: Նա, մասնավորապես, հայտարարեց, որ Լեռնային Ղարաբաղի շուրջ բանակցությունները փակուղում են, իսկ Ադրբեջանը փորձում է Ղարաբաղում ցեղասպանություն կամ էթնիկ զտում իրականացնելու մանդատ ձեռք բերել: Միևնույն ժամանակ, Փաշինյանն ասաց, որ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը եւ ղեկավարությունն իրենք պետք է որոշեն իրենց հետագա ճակատագիրը: Ըստ Փաշինյանի՝ 44օրյա պատերազմից հետո Լեռնային Ղարաբաղի անվտանգության երաշխավորը, իր իսկ ստանձնած պարտավորությամբ, Ռուսաստանի Դաշնությունն է: Արցախից մինչ օրս պաշտոնական արձագանք չկա Փաշինյանի այս հայտարարություններին: Նիկոլ Փաշինյանի ասուլիսի ժամանակ հնչեցրած հայտարարությունների վերաբերյալ ArmLur.am-ը զրուցել է Արցախի «Արդարություն» կուսակցության ղեկավար Դավիթ Գալստանի հետ:

-Պարոն Գալստյան, ի՞նչ կասեք Փաշինյանի՝ Արցախի վերաբերյալ արած դիտարկումների մասին, ի՞նչ կարող ենք արձանագրել այս ամենից:

-Նիկոլ Փաշինյանն իր ասուլիսում անդրադարձավ որոշ արցախցիների՝ 20-հոգանոց ակցիային ռուս խաղապահների տեղակայման վայրում, բայց այդպես էլ չանդրադարձավ արցախցիների երկու մեծ ակցիաներին, երբ արցախահայությունը դուրս էր եկել հրապարակ եւ պահանջում էր, որպեսզի Արցախի ինքնորոշումը ճանաչվի միջազգայնորեն, երբ արցախցիները փաստում էին, որ պայքարելու են, քանի որ չեն պատկերացնում Արցախն Ադրբեջանի կազմում: Փոխարենը դիվանագիտական բոլոր խողովակներով Հայաստանի իշխանությունը՝ ի դեմս Նիկոլ Փաշինյանի, այս գիծն առաջ տաներ, ցավոք սրտի, անտեսելով ամբողջ արցախահայության պահանջը՝ նա իր ասուլիսի ժամանակ, չգիտես՝ ինչու, անդրադարձավ 20-հոգանոց ինչ-որ ակցիայի ռուս խաղաղապահների դեմ: Սրանով նա կրկին ջուր է լցնում Ադրբեջանի ջրաղացին, այն է՝ փնովել ռուս խաղաղապահների աշխատանքը: Փաշինյանի նման հայտարարությունները թույլ են տալիս մեզ մտածել, որ հենց այդ խմբակը ուղղորդվում է կամ Նիկոլ Փաշինյանի, կամ էլ այլ արտաքին կենտրոնների կողմից, որոնց կողմից ուղղորդվում է հենց Փաշինյանը:

-Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ բանակցությունները փակուղում են, իսկ Ադրբեջանը գնալով մեծացնում է իր պահանջները Արցախի ու Հայաստանի նկատմամբ: Ինչո՞ւ նման փակուղային իրավիճակում հայտնվեցինք, ու ի՞նչ ելքեր եք տեսնում:

-Բանակցություններն ինքն իրենց փակուղի չեն մտնում, փակուղի մտցրել է հենց Նիկոլ Փաշինյանը, ով դռների հետեւում այլ բան է խոսում, խոստումներ է տալիս, իսկ հրապարակային խոսքում այլ բան է ասում: Հենց Փաշինյանը բանակցությունները մտցրեց փակուղի, որի արդյունքում ունեցանք Արցախի 75%-ի կորուստ: Նա հայտարարում էր, թե Արցախի համար այնպիսի լուծում պետք է գտնի, որն ընդունելի լինի Հայաստանի, Արցախի ու Ադրբեջանի ժողովուրդների համար, բայց միայն Ադրբեջանի ժողովրդի համար է Փաշինյանի որոշումն ընդունելի: Չեմ կարծում, որ Արցախում եւ Հայաստանում ապրող հայերի համար ընդունելի են Փաշինյանի գտած լուծումները:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳՈՒՄ

ՀՀ արդարադատության նախարարությունը նոր նախագիծ է ներկայացրել եւ առաջարկում է փոփոխություններ կատարել «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում: Նախ՝ նշենք, որ գործող կարգավորումներով կուսակցությունները պարտավոր են յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող մայիսի 31-ից ոչ ուշ, ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել իրենց տարեկան հաշվետվությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաեւ դրա վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը, իսկ հրապարակելուց հետո՝ եռօրյա ժամկետում, հաշվետվությունը եւ դրա հրապարակման փաստը վկայող ապացույցը ներկայացնել հանձնաժողով:

Սակայն 2021 թվականի տարեկան հաշվետվությունների հրապարակման փաստը ստուգելիս հանձնաժողովը պարզել է, որ կան կուսակցությունների տարեկան հաշվետվություններ, որոնք ներկայացվել եւ հրապարակվել են անձնական տվյալներով, ուստի նախագծով առաջարկվում է, որ կուսակցություններն իրենց տարեկան հաշվետվությունները ներկայացնեն հանձնաժողով, իսկ վերջինս էլ ապահովի իր պաշտոնական կայքում դրանց հրապարակումը՝ բացառելով անձնական տվյալների հրապարակումը:

Նման կարգավորումը լուծում է առաջացած խնդիրները, այդ թվում՝ ազատում կուսակցություններին նույն տարեկան հաշվետվությունը 2 տարբեր մարմիններին ներկայացնելու հավելյալ պարտականությունից, միաժամանակ, առաջիկայում հայտարարագրերի ներկայացման էլեկտրոնային նոր համակարգում նախատեսվում է ապահովել նաեւ կուսակցությունների տարեկան հաշվետվությունների՝ էլեկտրոնային եղանակով ներկայացման բաժին, ուստի նպատակահարմար է տարեկան հաշվետվությունների ներկայացման եւ հրապարակման համար կիրառել հենց հանձնաժողովի պաշտոնական կայքը:

ԿԱՅՑԵԼԻ ՀԱՅԱՍՏԱՆ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ վաղը սպասվում է ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Իմանգալի Տասմագամբետովի այցը Հայաստան:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ այցը նախապես ծրագրավորված է եղել, եւ նա Հայաստանում հանդիպումներ կունենա Հայաստանի բարձրագույն ղեկավարության հետ:

Ամեն դեպքում, ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի առաջին այցը Հայաստան տեղի է ունենում հետաքրքիր ժամանակներում, երբ Նիկոլ Փաշինյանը մամուլի ասուլիսում կրկին բացասական արտահայտվեց կառույցի հասցեին: Դրանից մի քանի օր առաջ էլ հայտնի դարձավ, որ Հայաստանը ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի տեղակալի՝ իր քվոտայից հրաժարվելու առաջարկ է ներկայացրել:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ նախկին գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը կնշանակվի Արցախի Հանրապետության գլխավոր դատախազի պաշտոնում: Նշենք, որ նա 2022 թվականի սեպտեմբերից հրաժեշտ էր տվել ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնին եւ այդ ժամանակից առ այսօր նոր պաշտոնի չէր անցել: Թեեւ նրան խոստացել էին կրթական հաստատություններից մեկի ղեկավարումը հանձնել, սակայն մինչ օրս չէին նշանակել: Ինչպես գրել էր «Ժողովուրդ» օրաթերթը 2022 թվականի նոյեմբերի 25-ի համարում, Արթուր Դավթյանն աշխատանքի կանցնի Արցախում:

Հիշեցնենք, որ Արցախի Հանրապետության գլխավոր դատախազ Գուրգեն Ներսիսյանը նշանակվել է Արցախի պետնախարար, եւ Արթուր Դավթյանը կփոխարինի հենց նրան: Քաղաքական որոշումն արդեն կայացվել է:

ՉԻ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ՎԵՐԱՀՍԿԵԼ ՍԵՎ ՇՈՒԿԱՆ

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան կրկին չի կարողանում վերահսկել խաղերի տոմսերի վաճառքն ու սեւ շուկան: Ավելին՝ մեծ թվով ֆուտբոլասերներ պարզապես զրկվել են մարզադաշտում Հայաստանի հավաքականի խաղը դիտելու հնարավորությունից: Իսկ ինչի՞ մասին է խոսքը. մարտի 6-ին տեղեկություն հրապարակվեց այն մասին, որ սկսվել է Հայաստան-Թուրքիա ֆուտբոլային տոմսերի առցանց վաճառքը: Ընդ որում՝ տոմսերը ինչպես առցանց, այնպես էլ Վ. Սարգսյանի անվան Հանրապետական մարզադաշտի տոմսարկղից հնարավոր է գնել միայն անձնագրային նույնականացում անցնելուց հետո: Մեկ անձը կարող է գնել ոչ ավելի, քան երկու տոմս: ՀՖՖ-ից նաեւ հայտնել էին, որ տոմսերի վաճառքը Վ. Սարգսյանի անվան Հանրապետական մարզադաշտի տոմսարկղում կմեկնարկի ավելի ուշ, սակայն արդեն մարտի 13-ին հայտնի դարձավ, որ բոլոր տոմսերը սպառվել են, եւ մարզադաշտի տոմսարկղում տոմսերի վաճառք չի լինի: Եվ, ահա, այս հանգամանքն առաջացրել է երկրպագուների զայրույթը, դարձել տոմսերի սեւ շուկայում ընթացող վաճառքի զարգացման հիմք: Օրինակ՝ արեւելյան տրիբունայում այժմ կարող եք մեկ տոմսը, 3-5 հազար դրամի փոխարեն, ձեռք բերել 25-35 հազար դրամով, հարավային եւ հյուսիսային տրիբունաներում մեկ տոմսի արժեքը, 2 հազար դրամի փոխարեն, 20 հազար դրամ է, արեւմտյան տրիբունայում մեկ տոմսի արժեքը հասնում է 50 հազար դրամի՝ 10 հազար դրամի փոխարեն: Ավելին՝ մոտավոր 15 հազար հանդիսական տեղավորող մարզդաշատի համար, պարզվում է, ոչ բոլոր տոմսերն են հանվել վաճառքի: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ որոշում է կայացվել մոտ 5 հազար տոմս ոչ թե վաճառել, այլ տրամադրել սեփական եւ վստահելի մարդկանց՝ այնտեղ հնարավոր լարվածություն թույլ չտալու համար: Այսինքն՝ մի կողմից՝ ոչ բոլորն են կարողացել տոմս գնել, մյուս կողմից էլ՝ ՀՖՖ-ն չի կարողանում վերահսկել սեւ շուկան, եւ վերավաճառողներն անարգել հարստանում են:

ՀՐԱԺԱՐՎՈՂՆԵՐԸ ԴԱՏՎՈՒՄ ԵՆ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Ռադիկ Սարուխանյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա, հանդիսանալով պահեստազորի առաջին խմբի առաջին կարգում հաշվառված կրտսեր ենթասպայական կազմի պահեստազորային, պարտավոր լինելով մասնակցել ՀՀ կառավարության 23.06.2022 թվականի որոշմամբ հայտարարված՝ 2022 թվականի օգոստոսի 01-ից մինչեւ հոկտեմբերի 30-ն անցկացվող եռամսյա վարժական հավաքին, 24.06.2022 թվականին ստացել է ծանուցագիրը եւ բուժզննման ուղեգիրը, որից հետո ճանաչվելով պիտանի վարժական հավաքների համար՝ վարժական հավաքների մեկնելու օրը՝ 2022 թվականի օգոստոսի 01-ին, չի ներկայացել ՀՀ ՊՆ Լոռու մարզի տարածքային ստորաբաժանում եւ չի մեկնել վարժական հավաքների՝ այդկերպ խուսափելով եռամսյա վարժական հավաքին մասնակցելուց:

Ո՞Վ Է ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՄԵՂԱՎՈՐԸ

ArmLur.am-ը զրուցել է «Մարիաննա» ընկերության մանրէաբան Սոնա Քոթանջյանի հետ, թե ինչպես է ընկերությունը խախտումներով կաթնաշոռ արտադրում՝ վտանգելով մարդկանց կյանքը: Ի պատասխան մեր հարցման՝ ընկերության աշխատակից Սոնա Քոթանջյանը հայտնեց, թե ինչ են պատրաստվում անել: Նրա խոսքով՝ կազմակերպությունը պահպանել է բոլոր սանիտարահիգիենիկ պայմանները, եւ հավանական է, որ խանութներում սառնարանների ջերմաստիճանների տատանման պատճառով է առաջացել նման խնդիր: «Բոնիլատ» ընկերությունից մեկնաբանեցին, որ յուրաքանչյուր խմբաքանակ գնում է լաբորատորիա, եւ մենք նման շեղումներ չենք հայտնաբերել այդ օրվա խմբաքանակի կաթնամթերքի մեջ, բայց հնարավոր է՝ երկրորդային աղտոտում է. մենք ոչինչ չենք բացառում: Այս պահին ընկերությունը կանգնած է, մաքրման աշխատանքներ են ընթանում: Այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում ասաց «Բոնիլատ» ընկերության համապատասխան աշխատակիցը՝ անդրադառնալով «Հետք»-ի մարտի 2-ին փորձաքննության շուկայում լայն սպառում ունեցող կաթնաշոռի 10 նմուշին, որոնք գրանցել են բազմակի շեղումներ:

«Հետք»-ը մարտի 2-ին փորձաքննության է ներկայացրել շուկայում լայն սպառում ունեցող կաթնաշոռի 10 նմուշ:

«Փորձաքննության ներկայացված կաթնաշոռի 10 նմուշից միայն 2-ն է համապատասխանում սահմանված նորմերին. դրանք են «Թամարա» եւ «Անի» ապրանքանիշերի կաթնաշոռները:

10 նմուշից 5-ում հայտնաբերվել են աղիքային ցուպիկի խմբի մանրէներ. դրանք են «Բիոկաթ», «Չանախ», «Աշտարակ կաթ», «Արզնի», «Բոնիլատ» ապրանքատեսակները:

0 նմուշից 8-ում հայտնաբերվել է խմորասնկերի անթույլատրելի բարձր քանակ. դրանք են «Մարիաննա», «Բիոկաթ», «Չանախ», «Աշտարակ կաթ», «Արզնի», «Մարիլա», «Բոնիլատ», «Հայր եւ որդի Երեմյաններ» ապրանքանիշերի արտադրանքները: Նմուշներից 4-ում հայտնաբերվել է բորբոսասնկերի անթույլատրելի քանակ. դրանք են «Մարիաննա», «Բիոկաթ», «Աշտարակ կաթ», «Արզնի» ապրանքանիշերի կաթնաշոռները: Միաժամանակ 3 ցուցանիշի շեղում՝ աղիքային ցուպիկ, ինչպես նաեւ խմորասնկերի եւ բորբոսասնկերի բարձր քանակ հայտնաբերվել է 3 նմուշում՝ «Բիոկաթ», «Աշտարակ կաթ», «Արզնի» կաթնաշոռներում:

ԱՐՁԱԳԱՆՔ

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ՝ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՈՒՐՋ

Ստացել ենք Ադրբեջանի նոր առաջարկները՝ խաղաղության պայմանագրի վերաբերյալ: Այս մասին երեկ՝ կառավարության նիստի ժամանակ, հայտարարել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ ասելով, թե թեւակոխել ենք պայմանագրի նախագծի քննարկման չորրորդ շրջափուլ: «Մենք կքննարկենք եւ առաջիկայում կներկայացնենք մեր դիտարկումները: Մենք հավատարիմ ենք ու չենք շեղվելու խաղաղության օրակարգից: Միեւնույն ժամանակ, պիտի միջազգային հանրության ուշադրությունը հրավիրեմ նաեւ այն փաստի վրա, որ ի հեճուկս 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության 8-րդ կետի՝ մինչեւ հիմա Ադրբեջանը չի վերադարձրել հայ գերիներին, պատանդներին, այլ պահվող անձանց, ինչպես նաեւ շարունակում է օկուպացիայի տակ պահել 1994, 2021, 2022 թվականների ագրեսիայի հետեւանքով բռնազավթած՝ Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքները», - նշել էր նա:

Նա նաեւ հանդես է եկել ելույթով, որում անդրադարձել է Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի շարունակվող ապօրինի շրջափակմանը եւ ԼՂ ժողովրդի նկատմամբ էթնիկ զտման, ցեղասպանության նախապատրաստություններին: Նիկոլ Փաշինյանը խոսել է կանխարգելիչ լրացուցիչ միջազգային մեխանիզմների գործարկման անհրաժեշտության մասին, ինչպես նաեւ ներկայացրել խաղաղության գործընթացի շրջանակում տարվող աշխատանքները: «Ի հեճուկս Արդարադատության միջազգային դատարանի սույն թվականի փետրվարի 22-ին հրապարակված որոշման՝ Ադրբեջանը շարունակում է ապօրինի կերպով փակ պահել Լեռնային Ղարաբաղը Հայաստանին կապող Լաչինի միջանցքի միակ անցանելի ասֆալտապատ ճանապարհը: Սրա հետեւանքով հումանիտար իրավիճակը Լեռնային Ղարաբաղում շարունակում է մնալ լարված:

Միեւնույն ժամանակ տեսնում ենք Լեռնային Ղարաբաղի հետ շփման գծում իրադրությունը ռազմական առումով սրելուն ուղղված կոնկրետ գործողություններ Ադրբեջանի կողմից: Սրա վերջին աղաղակող դրսեւորումը Լեռնային Ղարաբաղի ոստիկանության 3 աշխատակիցների սպանությունն էր ադրբեջանական դիվերսիոն խմբի կողմից սույն թվականի մարտի 5-ին: Ոստիկանները, հիշեցնեմ, ծառայողական նպատակներով մարդատար ավտոմեքենայով ուղեւորվում էին Լեռնային Ղարաբաղի Հին Շեն, Մեծ Շեն գյուղեր», - ասել է նա: Նրա խոսքով՝ հերթական այս միջադեպը տեղի է ունեցել Լեռնային Ղարաբաղում Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորախմբի պատասխանատվության գոտում: Կարեւոր է արձանագրել, որ Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարությունը մարտի 6-ին տարածած հաղորդագրության մեջ հստակ արձանագրել է, որ միջադեպի նախաձեռնողն ադրբեջանական կողմն է: Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության հաղորդագրության մեջ ասվում է նաեւ, որ Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի ներկայացուցիչների մասնակցությամբ վարույթ է իրականացվում՝ դեպքի մանրամասները պարզելու համար: Այս առումով, կարծում եմ, հատուկ գնահատականի պետք է արժանանա այն փաստը, որ Լեռնային Ղարաբաղի ոստիկանների սպանությունները տեղի են ունեցել Լաչինի միջանցքում»:

«Ադրբեջանի պետական եւ մերձպետական քարոզչությունը տեւական ժամանակ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ լայնածավալ հարձակման լրատվական ֆոն է ստեղծում, եւ լարվածության միտումները տեսանելի են նաեւ գետնի վրա»,- նշում է Փաշինյանը: «Մեր գնահատականը շարունակում է մնալ նույնը՝ Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը Լեռնային Ղարաբաղի ժողովրդի նկատմամբ էթնիկ զտումների, ցեղասպանության նախապատրաստություններ է տեսնում: Այս արձանագրումը մեծ հաշվով առկա է նաեւ Արդարադատության միջազգային դատարանի փետրվարի 22-ի որոշման մեջ, որտեղ հստակ արձանագրվել է, որ Լաչինի միջանցքի փակումը Լեռնային Ղարաբաղի ժողովրդի համար կարող է բերել անդառնալի հումանիտար հետեւանքներ: Այս իմաստով կարեւոր եւ անհետաձգելի եմ համարում, որ Հայաստանը միջոցներ ձեռնարկի ցեղասպանությունների կանխարգելման միջազգային մեխանիզմների գործարկման ուղղությամբ: Խոսքը, մասնավորապես, ՄԱԿ շրջանակում նախատեսված մեխանիզմների մասին է: Այս մասին Արտաքին գործերի նախարարությանը տվել եմ համապատասխան հանձնարարականներ», - նշել է նա իր ելույթում:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԵՎՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ

Եվրոպական խորհրդարանի լիագումար նիստը մարտի 15-ին ընդունել է ԵՄ-Հայաստան եւ ԵՄ-Ադրբեջան հարաբերությունների 2021-2022թթ. զեկույցները, որոնք անդրադառնում են Հայաստանի եւ Ադրբեջանի հետ ԵՄ հարաբերությունների առանցքային կետերին, Արցախի հակամարտությանը եւ տարածաշրջանում Եվրամիության դերին՝ կայունության ու խաղաղության հաստատման գործում:

Երկու զեկույցները վերահաստատում են՝ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության համապարփակ պայմանագիրը պետք է երաշխավորի Հայաստանի ինքնիշխան տարածքի ամբողջականությունը, Արցախում բնակվող հայ բնակչության իրավունքներն ու անվտանգությունը:

ՉԳՐԱՆՑՎԱԾ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ

Պետական եկամուտների կոմիտեն ներկայացնում է 2023թ. փետրվար ամսվա ընթացքում ավարտված հսկողական աշխատանքների արդյունքներով չգրանցված (չձեւակերպված) վարձու աշխատող ունեցող հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվությունը:

2023 թվականի փետրվար ամսվա ընթացքում ավարտված հսկողական աշխատանքների արդյունքներով 26 հարկ վճարողի մոտ արձանագրվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձեւակերպելու խախտում:

Հսկողական միջոցառումների արդյունքում չգրանցված (չձեւակերպված) վարձու աշխատող ունեցող հարկ վճարողներին ընդհանուր առաջադրվել է շուրջ 17.7 մլն դրամի չափով տուգանք:

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՓԱՐԻԶՈՒՄ

Ալեն Սիմոնյանի որոշմամբ՝ ԱԺ պատվիրակություն կգործուղվի Փարիզ:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ պատվիրակության կազմում կլինեն ԵԽԽՎ-ում Ազգային ժողովի պատվիրակության ղեկավար, Ազգային ժողովի նախագահի տեղակալ Ռուբեն Ռուբինյանը (մարտի 19-22-ը), ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը (մարտի 21-23-ը), ՔՊ խմբակցության պատգամավորներ Արուսյակ Ջուլհակյանը (մարտի 14-16-ը) եւ Հռիփսիմե Գրիգորյանը (մարտի 23-25-ը), «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արմեն Ռուստամյանը (մարտի 20-24-ը):

ՀՀ ԱԺ պատվիրակությունը Փարիզում կմասնակցի Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի Միգրացիայի, փախստականների եւ տեղահանված անձանց հարցերի, Իրավահավասարության եւ խտրականության դեմ պայքարի հարցերի, Քաղաքական եւ ժողովրդավարության հարցերի, Իրավական հարցերի եւ մարդու իրավունքների, Մշակույթի, գիտության, կրթության եւ լրատվամիջոցների հարցերի, ինչպես նաեւ Մոնիտորինգի հանձնաժողովների նիստերի աշխատանքներին:

Պատգամավորների գործուղման հետ կապված ծախսերը՝ ճանապարհածախսը, օրապահիկը, ինչպես նաեւ գիշերավարձը, կկատարվեն պետբյուջեի հաշվին:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

ԿԱՍԿԱԾՎՈՂ 5 ԱՆՁԻՆՔ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ ԵՆ

ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Մարտունու քննչական բաժնում դարձվում են դաշտոնատար անձի օրինական ծառայողական գործողությանը միջամտելու հերթական դեպքի հանգամանքները:

ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայությունից հաղորդում է ստացվել այն մասին, որ 2023թ. մարտի 15-ին պարեկային ծառայության երեք աշխատակիցներ ծառայություն են իրականացրել Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Արծվանիստ բնակավայրի վարչական տարածքում: Հիշյալ բնակավայրի գյուղամիջյան ճանապարհով ժամը 22:00-ի սահմաններում երթեւեկելիս նկատել են նույն բնակավայրի բնակչի, որը գտնվել է ճանապարհի միջնամասում, դուրս չի եկել ճանապարհից եւ այդ ընթացքում հայհոյանքներ է հնչեցրել ծառայություն իրականացնող ոստիկանության աշխատակիցների հասցեին:

Պարեկային ծառայողները կայանել են մեքենան, մոտեցել տղամարդուն, սակայն վերջինս շարունակել է հայհոյել եւ դրսեւորել ագրեսիվ վարքագիծ: Ոստիկանության աշխատակիցները փորձել են հայհոյանքներ հնչեցնելու համար վերջինիս ենթարկել վարչական ձերբակալման, սակայն նրա հայրը խոչընդոտել է պարեկային ծառայողների գործողություններին, սկսել հայհոյել եւ քաշքշել ոստիկաններին:

Վիճաբանությանը միջամտել են նույն բնակավայրի եւս երեք բնակիչներ, որոնք քաշքշել եւ ձեռքերով, բռունցքով հարվածներ են հասցրել ոստիկանության աշխատակիցներին: Հաղորդման առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Մարտունու քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով: Հանցանք կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով՝ միջադեպի մասնակից 5 անձ ձերբակալվել է: Կատարվում են անհրաժեշտ քննչական եւ վարութային գործողություններ դեպքի ամբողջական հանգամանքները պարզելու նպատակով, նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն:

Հարգելով եւ հիմք ընդունելով անմեղության կանխավարկածը՝ հարկ ենք համարում կրկին իրազեկել, որ ծառայողական պարտականությունները կատող պարեկային ծառայողների օրինական պահանջներին չենթարկվելը, նրանց ծառայողական գործողություններին որեւէ ձեւով միջամտելը, մասնավորապես՝ նրանց, նրանց մերձավորների նկատմամբ սպառնալիքներ հնչեցնելը, նրանց գույքը ոչնչացնելը կամ նրանց նկատմամբ բռնություններ գործադրելը քրեորեն հետապնդելի արարքներ են, որոնց համար նախատեսված է պատիժ՝ ընդհուպ 5-ից մինչեւ 10 տարի ժամկետով ազատազրկում:

Դրսեւորելով բարձր քաղաքացիական գիտակցություն՝ ծառայողական պարտականությունները կատարող պաշտոնատար անձանց գործողությունների հետ անհամաձայնություն ունենալու պարագայում անհրաժեշտ է ոչ թե դրսեւորել հակաօրինական վարքագիծ, այլ նրանց առերեւույթ ոչ իրավաչափ գործողությունները վիճարկել վարչական կամ քրեաիրավական համապատասխան ընթացակարգերով: Կրկին զգուշացնում ենք, որ հանցավոր վարքագիծ դրսեւորելու բոլոր դեպքերը անաչառ քննությամբ բացահայտվելու են, իսկ հանցավոր արարքը հիմնավորվելու դեպքում համաչափ քրեաիրավական հետեւանքները լինելու են անխուսափելի:

ԴԱՏՎՈՒՄ ԵՆ

Ո՞Ր ԴԱՏԱՎՈՐՆ Է ՔՆՆԵԼՈՒ ԳՈՐԾԸ

Ամ «Հայաստան» խմբակցության դատգամավոր Արմեն Չարչյանի գործը մտավ դատարան: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ գործը մակագրվել է դատավոր Ադրինե Ղուկասյանին:

Արմեն Չարչյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով «Իզմիրլյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ում գործադիր տնօրեն, Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի վնասվածքաբանության եւ օրթոպեդիայի ամբիոնի վարիչ եւ ընդգրկված լինելով ՀՀ հատուկ քննչական ծառայության վարույթում քննվող թիվ 58212116 քրեական գործով Արթուր Ռոբերտի Սարգսյանին ծանր եւ առանձնապես ծանր հանցագործությունների համար առաջադրված մեղադրանքների առնչությամբ նշանակված կրկնակի հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննության հանձնաժողովի կազմում՝ որպես փորձագետ, 2017թ. փետրվարի 8-ին տվել է կրկնակի դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննության թիվ 17-0202 ակնհայտ կեղծ եզրակացությունը:

Վարդան Էդուարդի Խաչիյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առեւտրային կազմակերպության փորձագետ եւ ընդգրկված լինելով ՀՀ հատուկ քննչական ծառայության վարույթում քննվող թիվ 58212116 քրեական գործով Արթուր Ռոբերտի Սարգսյանին ծանր եւ առանձնապես ծանր հանցագործությունների համար առաջադրված մեղադրանքների առնչությամբ նշանակված կրկնակի հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննության հանձնաժողովի կազմում՝ որպես փորձագետ, 2017թ. փետրվարի 8-ին տվել է կրկնակի դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննության թիվ 17-0202 ակնհայտ կեղծ եզրակացությունը:

Հայկազն Արարատի Չախոյանին եւ Կարեն Մխիթարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննության ազգային բյուրո» պետական ոչ առեւտրային կազմակերպության փորձագետ եւ ընդգրկված լինելով ՀՀ հատուկ քննչական ծառայության վարույթում քննվող թիվ 58212116 քրեական գործով Արթուր Ռոբերտի Սարգսյանին ծանր եւ առանձնապես ծանր հանցագործությունների համար առաջադրված մեղադրանքների առնչությամբ նշանակված կրկնակի հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննության հանձնաժողովի կազմում՝ որպես փորձագետ, 2017թ. փետրվարի 8-ին տվել է կրկնակի դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննության թիվ 17-0202 ակնհայտ կեղծ եզրակացությունը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՑԱՀԱՅՏՎԵՑԻՆ

Փետրվարի 21-ին ոստիկանության Կապանի բաժնում խարդախության վերաբերյալ հաղորդում էր տվել Քաջարան քաղաքի 30-ամյա մի բնակիչ: Նախորդ օրը նա կարդացել էր քաղաքում փակցված հայտարարությունը, զանգել էր նշված հեռախոսահամարով, անհայտ մեկի հետ պայմանավորվել, եկել էր համաձայնության եւ երեք միլիոն դրամ վարկ ստանալու համար վճարային տերմինալով անհայտ անձին փոխանցել էր 300 հազար դրամ: Նույն անձը կրկին զանգել եւ հայտնել էր՝ իբր հաստատվել է ոչ թե երեք, այլ վեց միլիոն դրամի վարկը, իսկ երբ պարզվել էր, որ ոչ մի վարկ էլ չկա, եւ փոխանցված գումարն էլ խաբեությամբ հափշտակվել է, տղամարդը դիմել էր ոստիկանություն:

Հաջորդ օրերին խարդախությունների վերաբերյալ եւս երկու հաղորդում ստացվեց, որոնցից մեկը՝ Կապանի, մյուսը՝ Մեղրիի բաժնում:

Վարկած առաջ քաշվեց, որ բոլոր դեպքերում խարդախը նույն անձն է: Սկսվեց համագործակցված աշխատանք: Բացահայտման միջոցառումներին միացան նաեւ Արտաշատի ոստիկանները: Մարտի 3-ին էլ Արտաշատի բաժնում էր արձանագրվել խարդախության դեպք. նույնկերպ մի քաղաքացուց հափշտակել էին 45 հազար դրամ:

Համատեղ ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվեց, որ խարդախությունները կատարել էր Մասիս քաղաքի 23-ամյա մի բնակիչ: Օրեր անց երիտասարդը հայտնաբերվեց եւ տեղափոխվեց Կապանի բաժին: Պարզվել է նաեւ, որ նա 59-ամյա կապանցի մի տղամարդուց նույնկերպ հափշտակել էր 91 հազար դրամ, իսկ Արարատ քաղաքի մի բնակչուհուց՝ 100 հազար դրամ:

Նախաձեռնվել է քրեական վարույթ:

ԿԱՆԽԵԼ ԵՆ ՑԱԾ ՆԵՏՎԵԼԸ

Երեւանում երեկ՝ մարտի 16-ին՝ ժամը 11:00-ի սահմաններում, ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության 911 ճգնաժամային կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ մի քաղաքացի անցել է Կիեւյան կամրջի վտանգավոր եզրագիծը ու սպառնում է, ցած նետվելով, ինքնասպանություն գործել:

Պարեկները նախ կարողացել են այդ քաղաքացու հետ բանակցություններ վարել, ապա փրկարարներն էլ կարողացել են բռնել նրան ու վտանգավոր եզրագծից դուրս բերել:

Այդ քաղաքացին այնուհետեւ պարեկների կողմից տեղափոխվել է Ոստիկանության Մաշտոցի բաժին:

Դեպքի փաստով Հայաստանի քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ եւ Դավիթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում նախաձեռնվել է վարույթ:

Կայքի տեղեկություններով՝ այդ քաղաքացին Երեւանի բնակիչ 62-ամյա Սամվել Հ.-ն է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 15-ից 16-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 67 դեպք, որոնցից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՐՁԻՑ ՀԱՍՏԱՏՎԵՑ

Դիլիջան խոշոր համայնքի ավագանին մարտի 14-ի նիստում, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի եւ նույն օրենքի 82.1 հոդվածի պահանջներով, որոշել է հաստատել Դիլիջանի համայնքապետարանի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանը: Դիլիջան համայնքի ավագանու փետրվարի 17-ի նիստում ավագանին չէր հաստատել համայնքապետարանի տարեկան աշխատանքային պլանը: Համայնքի ավագանու «Ապրելու երկիր» խմբակցության անդամները դժգոհություն էին հայտնել, որ համայնքապետարանի ինտերնետային կայքում համայնքապետարանի տարեկան աշխատանքային պլանը չի տեղադրվել, եւ իրենք հնարավորություն չեն ունեցել դրան ծանոթանալու: Դիլիջանի համայնքապետարանը պատճառաբանել է, որ տարեկան աշխատանքային պլանը համայնքապետարանի պաշտոնական կայքում չի տեղադրվել, որովհետեւ տեխնիկական խնդիրներ են եղել:

ՌՈՒՍՆԵՐ՝ ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ

Տավուշի մարզկենտրոն Իջեւան քաղաքում բնակարանների վարձակալության գները ցածր չեն: Դրանք ցածր չեն նաեւ այն բանի շնորհիվ, որ վերջերս Իջեւանում բնակություն են հաստատել Ռուսաստանի քաղաքացիներ: Նրանք Իեւան քաղաքի բազմաբնակարան շենքերում վարձակալությամբ բնակարաններ են զբաղեցրել: Ռուսաստանի քաղաքացիների՝ Հայաստան տեղափոխվելու պատճառը Ուկրաինայում ընթացող պատերազմն է եւ դրա հետեւանքով ռուսական շատ ընկերությունների դեմ գործող արեւմտյան պատժամիջոցները: Ռուսաստանից Հայաստան վերաբնակվածների բացարձակ մեծամասնությունը հաստատվել է Երեւանում, Աբովյանում, Արարատյան դաշտի քաղաքներում, սակայն Ռուսաստանի շատ քաղաքացիներ Երեւանի համեմատ ցածր վարձավճարով բնակարաններ են վարձել Տավուշի մարզի Դիլիջան եւ Իջեւան քաղաքներում:

ՀԱԿԱԿԱՐԿՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՉԿԱՆ

Գրեթե ամեն տարի կարկուտը մեծ վնասներ է պատճառում Տավուշի մարզի գյուղատնտեսական ցանքատարածություններին, խաղողի եւ մրգատու այգիներին: Տավուշի մարզի 4 խոշոր համայնքներից 3-ում՝ Դիլիջանում, Իջեւանում եւ Բերդում, հակակարկտային կայաններ չկան: Տավուշի մարզի Նոյեմբերյան խոշորացված համայնքի բնակավայրերի տարածքում, հիմնականում՝ Դեբեդի հովտում, գործում է ընդհանուր թվով 13 հակակարկտային կայան, որոնք Նոյեմբերյան համայնքի տարածքի մի մասի ցանքերն ու այգիները պաշտպանում են կարկտից: Մինչեւ 2018թ.-ի թավշյա հեղափոխությունը Հայաստանի գյուղատնտեսության նախարարությունը ներկայացնում էր, որ շուտով Հայաստանի գյուղատնտեսական ցանքատարածությունները եւ այգիները պաշտպանելու համար տեղադրվելու են պաշտպանիչ ցանցեր, սակայն այդ գործը լայն կիրառում չգտավ: Խնդիրը բարդանում է նրանում, որ գյուղատնտեսության ոլորտում պետական ապահովագրություն չկա, եւ գյուղացիների հայացքը, ինչպես հարյուրավոր տարիներ առաջ, միշտ վախով ուղղվում է երկնքի մութ, կարկտաբեր ամպերին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՈՒԳԱՆՔԸ ԽՍՏԱՑՎՈՒՄ Է

ՀՀ արդարադատության նախարարությունն առաջարկում է փոփոխություններ կատարել ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում:

Նախագծով առաջարկվում է վարչական պատասխանատվության առավել խիստ միջոցներ սահմանել շենքեր եւ շինություններ ինքնակամ կառուցելու, վերակառուցելու, տեղադրելու, առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ, առանց թույլտվության քանդում կամ ապամոնտաժում իրականացնելու, ինքնակամ կառույցի կասեցման դեպքում շենքեր եւ շինություններ ինքնակամ կառուցելը շարունակելու, ինչպես նաեւ կառուցապատումը համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում չավարտելու համար:

Հիմնավորման մեջ նշվում է, որ այս իրավախախտումները Հայաստանի Հանրապետությունում դեռեւս խիստ մեծ թիվ են կազմում: Ավելին, բազմաթիվ են դեպքերը, երբ նշված իրավախախտումները կատարելուց եւ վարչական տույժի ենթարկվելուց հետո համապատասխան սուբյեկտները շարունակում են վարչական իրավախախտում համարվող արարքների կատարումը, մի շարք դեպքերում վարչական իրավախախտում համարվող արարքները շարունակվում են նույնիսկ երկրորդ անգամ տույժի ենթարկվելուց հետո:

Նշված իրավիճակը, ի թիվս այլնի, հետեւանք է նաեւ այն բանի, որ քննարկվող իրավախախտումների համար սահմանված վարչական տույժերն անհամարժեք են դրանց հանրային վտանգավորությանը:

Արդյունքում առաջանում է այնպիսի իրավիճակ, երբ համապատասխան սուբյեկտի կողմից այս խումբ իրավախախտումները կատարելու հետեւանքով վերջինիս նկատմամբ նշանակվող տույժերը հաճախ էականորեն ավելի պակաս են այդ իրավախախտումների կատարման կամ շարունակման պայմաններում վերջիններիս կողմից ստացվող եկամուտներից, ինչպիսի պայմաններում քաղաքացիների ու իրավաբանական անձանց համար հաճախ վարչական իրավախախտում կատարելը, դրա համար նշանակված վարչական տույժը վճարելը, նույնիսկ խախտման համար երկրորդ անգամ տույժի ենթարկվելը ավելի «շահավետ» են լինում, քան իրավախախտում կատարելուց խուսափելը եւ քաղաքաշինական համապատասխան նորմերի պահպանումը:

Այսպիսով, սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա, ինչպես նաեւ անհատական բնակելի տներում կամ ստորաբաժանված կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից, օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք, շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ կամ առանց թույլտվության քանդում կամ ապամոնտաժում իրականացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթհարյուրհիսնապատիկից հազարհինգհարյուրապատիկի չափով: Մինչ այդ գործում էր հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով տուգանքը:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱԿԱՔԴԵԼՈՒ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆԸ

ԲՐԻՏԱՆԻԱՆ ԿՀԱՏԿԱՑՆԻ 12,6 ՄԼՆ ԴՈԼԱՐ

Մեծ Բրիտանիայի կառավարությունը ֆինանսական օգնություն կտրամադրի Մոլդովային եւ Վրաստանին՝ երկու երկրների գործերին Ռուսաստանի ենթադրյալ միջամտությանը հակազդելու նպատակով:

Միացյալ Թագավորության արտաքին գործերի նախարարության տարածած հաղորդագրության մեջ նշվում է, որ գերատեսչության ղեկավար Ջեյմս Քլեւերլին այս մասին պաշտոնապես կհայտարարի մարտի 16-ին եւ 17-ին Քիշնեւ եւ Թբիլիսի կատարելիք այցերի ընթացքում: Ըստ Մեծ Բրիտանիայի ԱԳՆ-ի՝ ֆինանսավորումը պետք է օգնի երկրներին՝ դիմակայելու Ռուսաստանի «չարամիտ ազդեցությանը»:

«Միացյալ Թագավորությունը պասիվ չի հետեւի, թե ինչպես է Մոսկվան կոպտորեն խարխլում նրանց ժողովրդավարությունը, ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը»,- ասել է Քլեւերլին այցից առաջ: Մոլդովան կստանա լրացուցիչ 10 միլիոն ֆունտ ստեռլինգ (ավելի քան 12 միլիոն դոլար) պետական կառավարման բարեկարգման եւ տնտեսական վերափոխումների համար, այդ թվում՝ էներգետիկայի ոլորտում:

Իսկ Վրաստանը կստանա «նոր ֆինանսավորում հաջորդ տարվա ընտրությունների անվտանգությունն ուժեղացնելու համար»: Լոնդոնը 500 հազար ֆունտ ստեռլինգ (600 հազար դոլար) կտրամադրի Վրաստանին՝ 2024 թվականին նախագահի «ազատ եւ արդար ընտրություններ» ապահովելու եւ այդ գործընթացն արտաքին միջամտությունից պաշտպանելու համար: Բրիտանիայի արտաքին քաղաքական գերատեսչությունում հիշեցրել են, որ երկիրն ավելի վաղ 12 մլն ֆունտ (14,5 մլն դոլար) էր հատկացրել Մոլդովայում կոռուպցիայի դեմ պայքարի համար:

Եվս 10 միլիոն ֆունտ (12 միլիոն դոլար) ուղարկվել է ՄԱԿ-ի գծով՝ հանրապետությունում ուկրաինացի փախստականներին օգնություն ցույց տալու նպատակով: Փետրվարին Մոլդովայի նախագահ Մայա Սանդուն հայտարարել էր երկրում իրավիճակի ապակայունացման վտանգի մասին եւ խորհրդարանին կոչ արել լրացուցիչ լիազորություններ տրամադրել հատուկ ծառայություններին: Նրա խոսքով՝ հանրապետության պետական իշխանությունները հաստատել են Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկիի տեղեկատվությունը Մոլդովայի ներքաղաքական իրավիճակին Ռուսաստանի միջամտության ենթադրյալ ծրագրերի մասին:

Իր հերթին ՏԱՀ-ը հիշեցնում է, որ փետրվարի 14-ին ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան ընդգծել էր, որ Քիշնեւի հայտարարությունները՝ «Մոլդովայում իրավիճակն ապակայունացնելու Ռուսաստանի ծրագրի» մասին, ապացուցելի չեն: Նրա խոսքով՝ ակնհայտ է, որ Կիեւի կողմից նման ապատեղեկատվություն տարածելու իրական նպատակը «Քիշնեւին Ռուսաստանի հետ կոշտ առճակատման մեջ ներքաշելն է»:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 14 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 21-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

148 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍ

ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ՝ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ

Կառավարությունն իր մարտի 16-ի նիստում համաձայնություն տվեց Սյունիքի մարզի Մեղրիի համայնքի Նռնաձոր բնակավայրում գտնվող հողամասն առանց մրցույթի վարձակալության իրավունքով տրամադրել «Նռնաձոր» գյուղատնտեսական կոոպերատիվին:

Որոշման հիմնավորման մեջ նշվում է, որ Նռնաձոր գյուղում գտնվող ընդհանուր 147,918 հեկտար մակերեսով հատուկ նշանակության հողատարածքը նախկին հողօգտագործողի (ԱՆ քրեակատարողական ծառայություն) կողմից օգտագործվել է գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնելու համար: Հաշվի առնելով, որ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի (բացառությամբ շենքերով եւ շինություններով զբաղեցված եւ դրանց սպասարկման համար հատկացված հողամասերի) վրա չի տարածվում «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները, ուստի անհրաժեշտություն է առաջանում՝ վերը նշված հողատարածքի հետագա արդյունավետ տնօրինման, տիրապետման եւ օգտագործման լիազորությունները իրականացվի Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ղեկավարի միջոցով:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետը, հաշվի առնելով հողատարածքի տեղադիրքը եւ սահմանապահ Նռնաձոր բնակավայրի բնակիչների կողմից ստեղծված «Նռնաձոր» գյուղատնտեսական կոոպերատիվի խնդրանքը, միջնորդել է ՀՀ կառավարությանը պտղատու այգիների հիմնման նպատակով, առանց մրցույթի, անշարժ գույքի հարկին հավասարեցված տարեկան վարձավճարով հողատարածքը վարձակալության իրավունքով տրամադրել «Նռնաձոր» գյուղատնտեսական կոոպերատիվին:

Նշենք, որ «Նռնաձոր» գյուղատնտեսական կոոպերատիվը ստեղծվել է Նռնաձոր բնակավայրի բնակիչների կողմից, որի անդամները հանդիսանում են բացառապես սահմանապահ Նռնաձոր գյուղում մշտական բնակություն հաստատած եւ այգեգործությամբ զբաղվելու ցանկություն հայտնած բնակիչները:

Ըստ այդմ՝ պետական սեփականություն հանդիսացող հողատարածքը գյուղատնտեսական գործունեությունը ծավալելու նպատակով կօգտագործեն սահմանային գոտում բնակություն հաստատող բնակիչները, ինչի արդյունքում մասամբ կբարելավվի նրանց սոցիալական վիճակը, լրացուցիչ հետաքրքրություն կառաջացնի բնակավայրը չլքելու եւ լրացուցիչ խթան՝ սահմանը կայուն պահելու համար: Նախագիծը մշակվել է Սյունիքի մարզպետի կողմից:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ԻՆՉՊԵ՞Ս ԿՍԱՀՄԱՆՎԻ ՆՈՐ ԾՆՎԱԾ ԵՐԵԽԱՅԻ ԿԱՐԳԱԹԻՎԸ

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 6 ի N 275-Ն որոշման մեջ լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որով առաջարկվում է սահմանել, որ նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս հաշվի կառնվեն նաեւ նոր ծնված երեխայի ծնողներից (հորից եւ մորից) սերված՝ մինչեւ նոր ծնված երեխայի ծննդյան օրը մահացած երեխաները եւ զավակները, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք մահացել են պերինատալ շրջանում:

Ներկայացվող նախագծով առաջարկվում է նոր ծնված երեխայի համահայր կամ համամայր քույրերն ու եղբայրները նրա կարգաթիվը որոշելիս հաշվի կառնվեն, եթե՝

1. դատարանի վճռով երեխայի մյուս ծնողը (ով չի հանդիսանում նոր ծնված երեխայի ծնողը) զրկված է ծնողական իրավունքից կամ

2. առկա է զավակի՝ նոտարական ակտով հաստատված հայտարարությունն այն մասին, որ անչափահաս տարիքում իր փաստացի խնամքն ու դաստիարակությունն իրականացրել է նոր ծնված երեխայի ծնողը կամ

3. նոր ծնված երեխայի ծննդյան օրվա դրությամբ հաշվառված են նոր ծնված երեխայի բնակության (հաշվառման) վայրի հասցեով:

Բացի այդ, նախագծով առաջարկվում է սահմանել, որ նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս հաշվի կառնվեն նաեւ նոր ծնված երեխայի ծնողներից (հորից եւ մորից) սերված՝ մինչեւ նոր ծնված երեխայի ծննդյան օրը մահացած երեխաները եւ զավակները, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք մահացել են պերինատալ շրջանում: Ընդ որում, այս դեպքում, եթե արդեն նշանակվել է երեխայի ծննդյան միանվագ նպաստ՝ կարգաթիվը որոշելիս առանց հաշվի առնելու մինչեւ նոր ծնված երեխայի ծննդյան օրը մահացած նրա քրոջը կամ եղբորը (բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք մահացել են պերինատալ շրջանում), ապա նշանակված նպաստի չափը վերահաշվարկվելու է սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ 6 ամսվա ընթացքում կրկին դիմելու դեպքում: Այս կարգավորումը նախատեսվում է տարածել այն դեպքերի վրա, երբ երեխան ծնվել է 2022 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո: Այս ժանկետն առաջարկվում է սահմանել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքի գործող նորմի կիրառմամբ երեխայի ծննդյան օրվան նախորդող 3 տարին 44-օրյա պատերազմում զոհված ընտանիքների համար գործնականում կիրառելի չէ (զոհված զինծառայողների ծնողները պետական այլ ծրագրերի շրջանակներում 2022 թվականի ընթացքում են սկսել բարձր տեխնոլոգիաների կիրառմամբ միջոցներ ձեռնարկել իրենց ընտանիքների կազմը համալրելու համար):

Նախագծի հիմանվորման համաձայն՝ ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշման N 1 հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված են այն դեպքերը, երբ նոր ծնված երեխայի ծնողից (հորից կամ մորից) սերված երեխաները եւ զավակները (նոր ծնված երեխայի համահայր կամ համամայր քույրերն ու եղբայրները) հաշվի են առնվում նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս:

Հարկ է նկատի ունենալ, որ գործող կարգավորումներով նոր ծնված երեխայի համահայր կամ համամայր քույրերն ու եղբայրները հաշվի են առնվում, եթե՝

ա. դատարանի վճռով կամ ծնողի (ով չի հանդիսանում նոր ծնված երեխայի ծնողը) գրավոր համաձայնությամբ այդ երեխայի բնակության վայր է սահմանվել նոր ծնված երեխայի ծնողի բնակության վայրը,

բ. դատական կարգով հաստատված է այն փաստը, որ այդ երեխայի փաստացի խնամքն ու դաստիարակությունն իրականացնում է կամ այդ զավակի փաստացի խնամքն ու դաստիարակությունն անչափահաս տարիքում իրականացրել է նոր ծնված երեխայի ծնողը,

գ. նոր ծնված երեխայի ծնողը այդ երեխայի համար ստանում է ալիմենտ,

դ. նոտարական ակտով հաստատված է այդ երեխայի՝ նոր ծնված երեխայի ծնողի խնամքի տակ լինելու փաստը,

ե. նրանց մյուս ծնողը մինչեւ նոր ծնված երեխայի ծննդյան օրը մահացել կամ օրենքով սահմանված կարգով ճանաչվել է մահացած կամ անհայտ բացակայող կամ դատական կարգով ճանաչվել է անգործունակ,

զ. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնից ստացված տեղեկատվության համաձայն՝ այդ համամայր երեխայի (երեխաների) ծննդյան ակտի գրառման մեջ հոր մասին տեղեկությունը լրացվել է մոր գրավոր հայտարարության հիման վրա, կամ հոր մասին տեղեկությունը չի լրացվել (եթե նպաստը նշանակվելու է նոր ծնված երեխայի մորը),

է. ծնողի (ով չի հանդիսանում նոր ծնված երեխայի ծնողը) գրավոր համաձայնությամբ այդ երեխայի խնամքն ու դաստիարակությունն իրականացնում է նոր ծնված երեխայի ծնողը,

ը. այդ երեխայի (նոր ծնված երեխայի համահայր կամ համամայր քույր կամ եղբայր) ծնողները ամուսնալուծվել են նրա չափահաս դառնալուց հետո:

Այս տեսակետից հարկ է նկատի ունենալ, որ գործնականում տարբեր ամուսնությունից ծնված երեխաների դեպքում շատ հազվադեպ է հանդիպում, երբ դատարանի որոշմամբ է որոշված լինում նրանց բնակության վայրը: Հիմնականում այս դեպքերում երեխաները հաշվառված են լինում նոր ծնված երեխայի հասցեով:

Ըստ այդմ, անհրաժեշտություն է առաջացել այս տեսակետից վերանայել կարգաթիվը որոշելու պայմանները:

ԲԺՇԿԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ՝ ԳՈՐԾՈՂ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կառավարությունն իր մարտի 16-ի նիստում հավանություն տվեց ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծին:

Որոշման հիմնավորման մեջ նշվում է, որ ներկայում «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը անդրադարձ չի կատարում նշանակված դատավորների բժշկական զննության իրականացման կարգին, որպիսի պայմաններում գործնականում դժվարություններ են առաջանում գործընթացը կազմակերպելու հարցում:

Բացի այդ, բացակայում է դատավորի (դատավորի թեկնածուի հավակնորդի), դատավորի թեկնածուի բժշկական զննության իրականացման կարգը սահմանելու լիազորությունը: Կատարվող լրացումների շրջանակում նաեւ օրենսդրական հիմք կստեղծվի լիազոր մարմնի կողմից համապատասխան կարգի ընդունման համար:

Օրենսգրքի 113-րդ հոդվածի 4-րդ մասը, ինչպես նաեւ 159-րդ հոդվածի 3-րդ մասը բժշկական զննության կազմակերպման գործընթացում նախատեսում են իրավասու մարմնի, այն է՝ Առողջապահության նախարարության ներգրավում: Նշված պայմաններում Առողջապահության նախարարության գործառույթը սահմանափակվում է դիմումը համապատասխան բժշկական կազմակերպությանը փոխանցելով: Գործընթացն առավել արագ կազմակերպելու եւ անհարկի միջնորդավորվածությունից խուսափելու նպատակով նախատեսվում է Բարձրագույն դատական խորհրդի նախագահի կողմից դիմումի ներկայացում անմիջապես համապատասխան բժշկական հաստատությանը:

Կատարվող փոփոխությունների եւ լրացումների շրջանակում ֆիզիկական արատների եւ հիվանդությունների ցանկը կիրառելի է դառնում նաեւ պաշտոնավարող դատավորների համար, ինչպես նաեւ վերջիններիս համար նախատեսվում է բժշկական զննության իրականացման հնարավորություն:

Նախագծի ընդունմամբ բժշկական զննության իրականացման նպատակով դիմումները ներկայացվելու են անմիջականորեն համապատասխան բժշկական հաստատությանը:

Նախագծի ընդունմամբ նախատեսվում է ապահովել բժշկական զննության իրականացումը նաեւ պաշտոնավարող դատավորների համար:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐ

ՀԱՅ-ԻՐԱՔՅԱՆ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանն ընդունել է Իրաքի Հանրապետության ներկայացուցիչների պալատի Իրաք-Հայաստան բարեկամության խմբի ղեկավար Մոհամմեդ Խոշնաուի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպմանը ներկա էր նաեւ Հայաստանում Իրանի դեսպանության գործերի ժամանակավոր հավատարմատար Սուհայլան Մունզեր Խալիլ Ալ-Ջուբուրին: Ինչպես ArmLur.am-ը տեղեկանում է ԿԳՄՍ նախարարության տարածած հաղորդագրությունից, Արթուր Մարտիրոսյանը ողջունել է պատվիրակության անդամներին եւ նշել, որ հայ-իրաքյան կապերը պատմական խոր արմատներ ունեն, որոնց հիմքում երկու ժողովուրդներին մերձեցնող հումանիտար արժեքներն են, մասնավորապես՝ կրթությունը եւ մշակույթը: Փոխնախարարն ընդգծել է հայկական կողմի պատրաստակամությունը՝ մեծացնելու եւ զարգացնելու Իրաքի հետ համագործակցության ուղիները:

Մոհամմեդ Խոշնաուն շնորհակալություն է հայտնել ընդունելության համար եւ նշել հայ-իրաքյան բարեկամական կապերն ակտիվացնելու, կրթական տարբեր մակարդակներում եւ մշակույթի ոլորտում փորձի փոխանակման պատրաստակամության մասին:

Իրաքյան պատվիրակությունը, մասնավորապես, հետաքրքրվել է հայկական փորձով նախադպրոցական, հանրակրթական, բարձրագույն եւ ներառական կրթության ոլորտներում: Առաջարկվել է երկուստեք իրականացնել վերապատրաստման դասընթացներ, կլոր սեղան քննարկումներ: Փոխնախարար Մարտիրոսյանը ներկայացրել է «ՀՀ կրթության՝ մինչեւ 2030 թ. զարգացման ծրագիրը», որը, ըստ նրա, ուղենշային փաստաթուղթ է նաեւ համագործակցությունների ընդլայնման տեսանկյունից:

«Ըստ այս փաստաթղթի նախանշած թիրախների՝ Հայաստանի 4 բուհ կդառնա աշխարհի վարկանիշային աղյուսակի առաջատարներից եւ շատ պետությունների համար կրթական ցանկալի հանգրվան: Ըստ այդմ՝ այսօր Հայաստանում սովորող իրաքցի 300 ուսանողի թիվը եւս կարող է մեծանալ»,- ասել է Արթուր Մարտիրոսյանը: Նա նաեւ անդրադարձել է «Թումո», «Արմաթ», COAF ոչ ֆորմալ կրթական կենտրոնների գործունեությանը եւ պատվիրակության անդամներին առաջարկել այցելել ու տեղում ծանոթանալ կենտրոնների փորձին: Կողմերը քննարկել են նաեւ մշակույթի ոլորտում համագործակցության հնարավորությունները:

Կարեւորվել է զբոսաշրջության, թանգարանների, հուշարձանների պահպանության ուղղություններով երկու երկրների միջեւ փորձի փոխանակումը, ինչպես նաեւ համատեղ վերապատրաստումները մշակութային ժառանգության, ժամանակակից արվեստի ոլորտներում:

ԼՈՒՐԵՐ

Ո՞ՒՄ ԵՂԲԱՅՐՆ Է ՌԵԿՏՈՐԸ

Բրյուսովի անվան համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Գյուրջինյանը ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, երաժիշտ Նաիրա Գյուրջինյանի ազգականն է:

Նաիրա Գյուրջինյանը երկար ժամանակ եղել է «Հայ Սուպերսթար-2», «Հայ Սուպերսթար-4», «Իքս-Ֆակտոր 1», «Իքս-Ֆակտոր 2», «Հայ երգիչ» նախագծերի ժյուրիի անդամ եւ երաժշտական պրոդյուսեր:

Նշենք, որ երեկ Լեզվի կոմիտեի նախագահ Դավիթ Գյուրջինյանը նշանակվել է Բրյուսովի անվան համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար: Դավիթ Գյուրջինյանի նշանակման դեմ ուսանողները դասադուլ էին հայտարարել:

ԵՐԳԻՉ ԴԻՄԱՇ ԿՈՒԴԱՅԲԵՐԳԵՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ Է

Մի շարք մրցանակների դափնեկիր Դիմաշ Կուդայբերգեն, որը հաճախ է ելույթ ունենում ինչպես Ռուսաստանում, այնպես էլ այլ երկրներում կազմակերպված համերգային երեկոներին, մենահամերգով հանդես կգա Հայաստանում: Նա Հայաստան կայցելի Stranger համաշխարհային շրջագայության ընթացքում: Երգչի համերգը տեղի կունենա ապրիլի 29-ին Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում: Երգիչ, կոմպոզիտոր եւ մուլտիինստրումենտալիստ Դիմաշ Կուդայբերգեն տիրապետում է 6-7 օկտավայի, 4 նոտայի եւ 1 կիսատոնի հազվագյուտ վոկալ տիրույթի: Նա երգում է ղազախերեն, անգլերեն, ռուսերեն, իսպաներեն, իտալերեն, ֆրանսերեն եւ չինարեն: Կոնցեպտուալ առումով Stranger շոուն տարբեր տեսանկյուններից պատմում է լույսի ու խավարի, ցերեկվա ու գիշերվա, լուսնի ու արեգակի հավերժական պայքարի մասին, որում լույսը միշտ հաղթում է խավարին, իսկ բարին՝ չարին:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

«ՍԻՐԻԱՎԵՊ»

ԱՌԱՋԱԴՐՎԵԼ Է ԵՄ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ

Լուսինե Խառատյանի «Սիրիավեպ» գիրքը, որ ստեղծվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության «Թարգմանական ծրագրեր եւ աջակցություն ստեղծագործողներին ու հետազոտողներին» դրամաշնորհային ծրագրի շրջանակում, առաջադրվել է Եվրոպական միության գրական մրցանակի:

ԵՄ գրական մրցանակը ներգրավում է «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրի մասնակից երկրներին: Այն հանրահռչակում է գրական նոր տաղանդների:

Հանրային ուշադրության արժանացնելով Եվրոպայի ժամանակակից գրականության ստեղծարարությունը եւ գեղարվեստական գրականության հարստությունը՝ ԵՄ գրական մրցանակը նպատակ ունի խթանելու Եվրոպայի ներսում գրականության շրջանառությունը եւ ավելի մեծ հետաքրքրություն առաջացնելու օտարալեզու գրական գործերի նկատմամբ:

Հեղինակներին եւ նրանց վեպերն առաջադրել են ազգային կառույցները (մեր երկրում՝ ԵՄ գրական մրցանակի հայաստանյան գործընկեր «Փեն Հայաստան»-ը), որոնք քաջածանոթ են իրենց երկրների գրական ասպարեզին, ինչպես նաեւ փորձառու՝ իրենց գրականությունն արտերկրում տարածելու գործում:

Մրցանակի ժյուրին կընտրի 2023 թ. ԵՄ գրական մրցանակի հաղթողին եւ հատուկ մրցանակակիրներին, որոնց անունները կհրապարակվեն 2023 թ. ապրիլի 28-ին Լայպցիգի գրքի միջազգային տոնավաճառում:

Առաջադրված բոլոր հեղինակները եվրոպական հարթակում առաջխաղացման շարունակական աջակցություն կստանան ավելի լայն եւ միջազգային լսարան ունենալու, իրենց ազգային եւ լեզվական սահմաններից դուրս ընթերցողների հետ կապ հաստատելու նպատակով:

ԵՄ գրական մրցանակը կազմակերպում է Եվրոպական գրահրատարակիչների եւ Եվրոպական ու միջազգային գրավաճառների ֆեդերացիաներից բաղկացած կոնսորցիումը՝ «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրի աջակցությամբ:

Լուսինե Խառատյանի «Սիրիավեպ»-ն արկածային ստեղծագործություն է: Իրադարձությունները զարգանում են նախապատերազմական Սիրիայում, որտեղ գլխավոր հերոսները՝ հայաստանցի երեք կին հետազոտողներ, աշխատանքի բերումով այցելում են տարբեր վայրեր, հանդիպում եւ զրուցում մարդկանց հետ եւ այս ամենով պայմանավորված՝ հայտնվում սիրիական հատուկ ծառայությունների ուշադրության կենտրոնում: Վեպը լույս է ընծայել «Գրանիշ» հրատարակչությունը:

● Մարտի 18-ին Խամաճիկների պետական թատրոնում տեղի կունենա «Հենզելն ու Գրետելը» միջոցառումը: Տոմսերի արժեքը՝ 1500 դրամ: Սկիզբը՝ ժամը 12:30-ին, 14:00-ին, 15:30-ին:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ՎԱՐԿԱՅԻՆ

ՀԱՐՑ. Իրավունք ունի՞ գրավառուն (բանկ, վարկային կազմակերպություն, գրավատուն) առանց պարտապանին տեղյակ պահելու (ծանուցելու) վաճառել գրավ դրված գույքը:

Կարինե Մինասյան (31 տարեկան)

ՊԱԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ չի կարող: Եթե գրավի պայմանագրով կամ գրավառուի եւ գրավատուի միջեւ կնքված գրավոր համաձայնությամբ առկա է դրույթ՝ առանց դատարանի վճռի գրավ դրված գույքի իրացման մասին, ապա գրավառուն պարտապանի կողմից գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում պարտավոր է գրավոր՝ պատշաճ ձեւով ծանուցել պարտապանին առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման մասին (բռնագանձման ծանուցում)՝ համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 249 հոդվածի 2-րդ մասի:

Միաժամանակ հայտնում ենք, որ նույն հոդվածը սահմանում է նաեւ, որ բռնագանձման ծանուցումը պարտապանին հանձնելուց երկու ամիս հետո գրավառուն իրավունք ունի իրացնելու գրավի առարկան: Վերոնշյալ համաձայնության բացակայության դեպքում գրավ դրված գույքի հաշվին գրավառուի (պարտատիրոջ) պահանջները բավարարվում են դատարանի վճռով:

Այսպիսով, ֆինանսական կազմակերպությունը պետք է պարտապանին գրավոր ծանուցի գրավադրված գույքի իրացման վերաբերյալ, որից երկու ամիս հետո միայն կարող է իրացնել գույքը:

Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տեղեկացնում ենք, որ եթե կողմերի միջեւ կնքված պայմանագրով սահմանված է տույժի վճարման չափ եւ կարգ, ապա ֆինանսական կազմակերպությունն իրավասու է կիրառել դրանք մինչեւ պարտավորությունների ամբողջական մարումը:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ ինչ կարգով է կատարվում Հայրենական մեծ պատերազմի վետերանների ավանդների փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձանց հաշվառումը:

Գնել Սահակյան (68 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Փոխհատուցում ստանալու համար Հայրենական մեծ պատերազմի վետերանը հաշվառման նպատակով իր փաստացի բնակության վայրի սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմին (Փարոս) անձամբ կամ լիազորագրի հիման վրա գործող ներկայացուցչի միջոցով ներկայացնում է սահմանված ձեւի դիմում եւ հաշվառման համար անհրաժեշտ փաստաթղթեր:

Հայրենական մեծ պատերազմի վետերանի պահանջով սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինը հաշվառումը կարող է իրականացնել վետերանի բնակության վայրում՝ կազմակերպելով տնային այցելություն (ներառում է այցելություն բուժման վայր):

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայրենական մեծ պատերազմի վետերանների ավանդների փոխհատուցումը վճարվում է Հայփոստի բաժանմունքի սպասարկող անձի կողմից տուն առաքելու միջոցով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանը մարտի 15-ին ներկայացրեց այն երգը, որով մեր այս տարվա ներկայացուցիչը՝ Բրյունետը, ելույթ է ունենալու Լիվերպուլում: Եվրատեսիլյան պաշտոնական ալիքում տեղադրվելուց մեկ ժամ անց Future Lover-ն արդեն ուներ հարյուր հազարավոր դիտումներ:

Այս պահին Բրյունետի տեսահոլովակը մրցույթի ալիքում ունի ավելի քան 440 հազար դիտում ու 4000-ից ավել մեկնաբանություն:

Հատկանշական է, որ եվրոպացի երկրպագուները հավանել են Հայաստանի երգը. նրանք թողել են դրական մեկնաբանություններ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **16.03.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: